ՖԱԼԻԲԻԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՊՐԱԳՄԱՏԻԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ *

ՀՏԴ 165.6/.8 *DOI: 10.52063/25792652-2024.1.20-97*

ԴԱՎԻԹ ԱՔԵԼՅԱՆ
Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
davit.agelyan@ysu.am
ORCID: 0000-0002-0100-5773

Հոդվածի հիմնական նպատակն է բացահայտել ֆալիբիլիզմի և դրա հիմնական սկզբունքների զարգացումը 19-րդ դարի փիլիսոփայության և, մասնավորապես, պրագմատիզմի ուղղության տարբեր ներկայացուցիչների իմացաբանական ու գիտաբանական հայացքներում:

Նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ վերլուծել ֆալիբիլիզմի ձևավորմանը և հետագա զարգացմանը նպաստած 19-րդ դարի մի շարք մտածողների իմացաբանական, գիտաբանական և այլ հայացքները, քննել ֆալիբիլիզմի զարգացմանը նպաստած պրագմատիզմի ներկայացուցիչների հայացքների ընդհանրությունները, տարբերություններն ու ֆալիբիլիզմի զարգացման և դրսևորման հիմնական միտումները:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են բազմաթիվ բնագրեր և հոդվածներ: Հետազոտությունում կիրառվել են անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի, համանմանության և պատմահամեմատական մեթոդները:

Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ 19-րդ դարի փիլիսոփայության և գիտության մի շարք մտածողներ, ի դեմս Չարլզ Պիրսի, Ուիլյամ Ջեյմսի և Ջոն Դյուիի, կարևոր նշանակություն են ունեցել ֆալիբիլիզմի հիմնական սկզբունքների ձևակերպման և զարգացման համար: Մասնավորապես, նշված հեղինակների կողմից ճանաչողությունում մշտական կասկածի և սխալականության անօտարելիության արձանագրումը և ֆալիբիլիզմի իմացաբանական-մեթոդաբանական գործառույթների կարևորումը հիմք է դարձել ֆալիբիլիզմի՝ որպես հայեցակարգի ձևավորման և հետագա զարգացման համար: Կատարված հետազոտությունը թույլ է տալիս պնդել, որ դեռևս 19-րդ դարում ֆալիբիլիզմի հիմնական սկզբունքները կիրառվել են գիտելիքների նաև այլ ոլորտներում՝ հասարակական-քաղաքական խնդրակարգերի առնչությամբ: Այս արձանագրումը կարևոր նշանակություն կարող է ունենալ արտաիմացաբանական խնդրակարգերում ֆալիբիլիզմի կիրառական նշանակության հետագա ուսումնասիրությունների համար:

* Հոդվածը ներկայացվել է 21.02.2024թ., գրախոսվել՝ 10.03.2024թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2024թ.:

Հիմնաբառեր՝ *ֆալիբիլիզմ, ինֆալիբիլիզմ, ֆունդամենտալիզմ, սկեպտիցիզմ, պրագմատիզմ, կասկած, համոզմունք, գիտելիք:*

Ներածություն

Ֆալիբիլիզմի հայեցակարգային հիմնական սկզբունքներն իրենց ձևակերպումն ու ժամանակակից ըմբռնումն են ստացել 19-20-րդ դարերի իմացաբանության և գիտության փիլիսոփայության մի շարք ներկայացուցիչների հիմնարար աշխատանքներում: Այս ժամանակաշրջանը նշանավորվել է գիտության զարգացման դասական, հետդասական և հետոչդասական շրջափուլերի հաջորդական անցումով, փիլիսոփայական տարբեր սկզբունքների ու տեսությունների վերաիմաստավորմամբ, ինչպես նաև գիտության ու փիլիսոփայության մի շարք նոր հայեցակարգերի և տեսությունների ձևավորմամբ: Դասական և հետդասական գիտությունների համար պայմանական անջրպետ համարվող 19-րդ դարում մի շարք մտածողների համար արդեն ակնհայտ էին դառնում առկա իմացաբանական հիմնախնդիրների հասկացման բարդություններն ու դրանց լուծման արդյունավետ ճանապարհների բացակայությունը: Սա պայմանավորված էր բացարձակ, վերջնական, անկասկածելի և անսխալական ճշմարտությունների, գիտելիքների ու համոզմունքների վերաբերյալ դասական պատկերացումներում աստիճանաբար ի հայտ եկող խնդիրներով, ինչպես նաև նշված պատկերացումների համար իմացաբանական հիմք հանդիսացող հայեցակարգերի՝ դոգմատիզմի, ֆունդամենտալիզմի և ինֆալիբիլիզմի հիմնական սկզբունքների դեմ ներկայացվող ծանրակշիռ հակափաստարկների ու ծանր քննադատության առկայությամբ:

Մասնագիտական գրականությունում կան տարբեր փորձեր նկարագրելու և վերլուծելու ֆալիբիլիզմի զարգացումն ու դրսևորումը տարբեր ժամանակաշրջաններ ներկայացնող առանձին հեղինակների հայացքներում: Սակայն օտարալեզու գրականությունում և մեզանում սակավ են այն ուսումնասիրությունները, որոնք ներկայացնում են ֆալիբիլիզմի զարգացումը, դրսևորման համեմատական ընդհանրությունները, տարբերություններն ու միտումները դասական, հետդասական և հետոչդասական գիտության ու փիլիսոփայության իրար հաջորդող շրջափուլերում գործած տարբեր մտածողների հայացքներում ու ուսումնասիրություններում: Արձանագրելով նշված խնդիրների ոչ պատշաճ լուսաբանվածությունը՝ սույն աշխատանքը նպատակ ունի քննարկելու առաջ քաշված խնդիրները ֆալիբիլիզմի զարգացմանն առավելապես նպաստ բերած 19-րդ դարի իմացաբանության, գիտության փիլիսոփայության և, մասնավորապես, պրագմատիստական փիլիսոփայության ներկայացուցիչների իմացաբանական, գիտաբանական և այլ հայացքների ուսումնասիրման միջոցով:

Ֆալիբիլիզմի զարգացումը Չարլզ Պիրսի հայացքներում

Ֆալիբիլիզմը՝ որպես իմացաբանական սկզբունք և հայեցակարգ, առաջին անգամ սահմանվել և շրջանառության մեջ է դրել ամերիկյան պրագմատիզմի ականավոր ներկայացուցիչ Չարլզ Սանդերս Պիրսը (1839-1914): Պիրսի իմացաբանության կենտրոնական հարցերից է համոզմունքների և կասկածի փոխհարաբերման հիմնախնդիրը, որը փիլիսոփայի հետաքրքրության շրջանակում հայտնվել է հատկապես Ռենե Դեկարտի իմացաբանական կասկածի մեթոդի և ֆունդամենտալիստական իմացաբանության ուսումնասիրման արդյունքում: Պիրսի մի շարք հոդվածներ և աշխատություններ ընդգծված քննադատական մոտեցում են ցուցաբերում կարտեզիանիզմի, ֆունդամենտալիզմի և ապրիորիզմի գրեթե բոլոր տարատեսակների ու դրսևորումների նկատմամբ: Քննադատության հիմնական

թիրախներից մեկը ինֆալիբիլիզմն է՝ ֆալիբիլիզմի անմիջական հակադիր հայեցակարգը, ըստ որի՝ *համոզմունքներն ու գիտելիքները պահանջում են անսխալականություն, և մենք որոշ համոզմունքներ գիտենք կամ կարող ենք իմանալ անսխալականորեն (որպես բացարձակ, անկասկածելի ճշմարտություն, որը զերծ է սխալներից և բարելավվելու կամ փոփոխվելու հետագա անհրաժեշտությունից)*: Ըստ Պիրսի՝ ինֆալիբիլիզմը առավել բնորոշ է կրոնին ու կրոնական աշխարհայացքին, որտեղ տրված համոզմունքներն ու գիտելիքները անկասկածելի և անքննելի են (դոգմատիզմ) և հիմք են ծառայում կշռադատության ընթացքում ի հայտ եկող հետագա ճշմարիտ դատողությունների համար (ֆունդամենտալիզմ): Խոսելով գիտությունում դրսևորվող ինֆալիբիլիզմի մասին՝ Պիրսը նշում է, որ գիտական ինֆալիբիլիմն իր համար «զավեշտալի» է, քանի որ *«չափելիության վերաբերյալ այն գիտություններում, որտեղ սխալներն ամենաքիչն են ի հայտ գալիս, իրեն հարգող ոչ ոք չի արձանարգում իր արդյունքը՝ առանց ընդունելու սխալվելու ու սխալի առկայության հավանականությունը: Եվ եթե այս պրակտիկան չի պահպանվում այլ գիտություններում, դա այն պատճառով է, որ դրանցում հավանական սխալները չափազանց մեծ են գնահատելու համար»* (Peirce, *Philosophical Writings of Peirce* 3): Պիրսն ինքն արձանագրում է, որ իր փիլիսոփայությունը և ուսումնասիրությունները ֆալիբիլիստական են. *«Տարիներ շարունակ այս հասունացման գործընթացում ես իմ գաղափարները ինքս ինձ համար հավաքում էի ֆալիբիլզիմի (սխալականության) անվան ներքո»* (Peirce, *Philosophical Writings of Peirce* 4): Ֆալիբիլիզմի գրեթե բոլոր ժամանակակից սահմանումներն ու ըմբռնումները այս կամ այն կերպ արտացոլում են պիրսյան ֆալիբիլիզմի առավել ընդհանուր սկզբունքները՝ ***«մարդիկ կարող են ունենալ հուսալի գիտելիքներ, սակայն ոչ երբեք բացարձակ որոշակի գիտելիք: Ամբողջ գիտելիքը մարդկային բանականության և դիտարկման արդյունք է, և քանի որ այս մեթոդներից ոչ մեկը անսխալական չէ, այդ մեթոդներով ստացված ողջ գիտելիքը ապագայում կարող է հիմնավորապես ապացուցվել որպես սխալ»*** (Cooke 158): Վերլուծելով համոզմունքների ու գիտելիքների հավաստիության և դրանց համար անհրաժեշտ պայմանների հարցը՝ Պիրսն առանձնացնում է չորս հիմնական աղճատումներ, որոնք արատավորում են մեր համոզմունքներն ու գիտելիքները, դրանց նկատմամբ մեր ըմբռնումը և դրանք ճանաչելու ու ձեռք բերելու իրատեսական հնարավորությունները՝

1. բացարձակ պնդումների, աքսիոմների և կանխադրույթների նկատմամբ համոզմունքն ու անկասկած վերաբերմունքը,
2. այս կամ այն երևույթի անճանաչելիության վերաբերյալ համոզմունքը,
3. գիտության այս կամ այն տարրի անսխալական, վերջնական լինելու վերաբերյալ համոզմունքը,
4. համոզմունքն այն մասին, որ այս կամ այն օրենքը կամ ճշմարտությունը գտել է իր վերջնական և կատարյալ ձևակերպումը, որը թույլ է տալիս ենթադրել, որ բնության սովորական ընթացքը երբեք չի կարող խաթարվել և փոփոխվել (peirce, *philosophical writings of peirce* 54-56):

Պիրսն առանձնացնում է նաև մի շարք այլ փաստարկներ համոզմունքների, գիտելիքների ու, ընդհանրապես, ճանաչողության սխալական ու անորոշ բնույթի օգտին, որոնցից հատկանշական են հետևյալները՝

1. Ամբողջ գիտելիքը արտահայտվում և դրսևորվում է դատողությունների միջոցով, սակայն ոչ մի դատողություն ինքնին հասկանալի կամ ինքնամփոփ չէ: Դրանց իմաստն ու ճշմարտության արժեքը կարող է երևալ միայն այլ դատողությունների և հասկացությունների հետ հարաբերության մեջ:
2. Գիտելիքները պարունակում են ընդհանուր և աբստրակցիայի բարձր աստիճան ունեցող հասկացություններ, որոնք չափազանց անորոշ են և նշանակություն են

ստանում միայն լեզվի ու իրական աշխարհի հարաբերությունների ամբողջական ցանցում:

3. Մեր բոլոր մտքերը նշաններ են և հնարավոր չէ մտածել դրանցից դուրս: Իսկ դրանցում արձանագրվող և նկարագրվող առարկաները մեզ տրվում են միայն որոշակի սահմանափակ ձևով: Մտքերը, որոնք նշաններով սահմանափակված են, չեն կարող լիարժեքորեն արտահայտել օբյեկտիվ իրականության պատկերը:

4. Համոզմունքների ձևավորման լավագույն և ամենաապահով տարբերակը գիտական մեթոդն է, սակայն սա նույնպես զերծ չէ սխալներից: Ցանկացած մեթոդ, որը կընտրվի ուսումնասիրության համար, չի կարող ապահովել բացարձակ որոշակի և անսխալական եզրակացություն: Եվ մենք ունակ չենք դուրս գալու տրված մեթոդի սահմաններից, որպեսզի համոզվենք՝ արդյոք մենք հասել ենք վերջնական ճշմարտության, թե ոչ (Cooke 159):

Պիրսը եզրակացնում է, որ *«բանականության միջոցով երբեք հնարավոր չէ հասնել բացարձակ որոշակիության, բացարձակ ճշգրտության և բացարձակ համընդհանրության: Մենք չենք կարող լիովին վստահ լինել, որ մեր եզրակացությունները նույնիսկ մոտավորապես ճիշտ են»* (Peirce, *Philosophical Writings of Peirce* 56): Սակայն նա միակը չէր իր ժամանակաշրջանում, ով քննարկում էր մարդկային սխալականության, գիտելիքների որոշակիության և ճշմարիտ համոզմունքների հիմնախնդիրները: Այսպիսի միտում կարելի էր արձանարգել գիտության տարբեր ոլորտների տեսական և պրակտիկ ուսումնասիրություններում: Իր իմացաբանական հայացքների, ընկալումների և ֆալիբիլիստական աշխարհայացքի ձևավորման վրա հատկապես մեծ ազդեցություն են ունեցել շոտլանդացի փիլիսոփա և հոգեբան Ալեքսանդր Բեյնի աշխատանքներն ու հետազոտությունները, որտեղ Բեյնը առաջ է քաշում համոզմունքներ ձևավորելու, դրանք ամրապնդելու և սեփական սխալականությունը հաղթահարելու մարդկային ձգտումների վերաբերյալ հիմնարար տեսություն և գաղափարներ: Ըստ Բեյնի՝ համոզմունքը հակվածություն է գործողության նկատմամբ, իսկ *«մեր պնդումը համապատասխան գործելու պատրաստակամությունը՝ համոզմունքի միակ, իրական և անսխալական չափանիշը»* (Bain 505): **Համոզմունքի հակառակը ոչ թե անհամոզվածությունն է, այլ կասկածը և անորոշությունը,** որոնք բխում են նոր փորձի միջոցով տվյալ համոզմունքի «ստուգումից»: Բեյնը կարծում էր, որ առկա համոզմունքը փորձաքննության ենթարկելը մարդու մոտ առաջացնում է տհաճության և վախի զգացումներ: Մարդիկ ենթարկվում են երկու հակադիր ճանաչողական (կոգնիտիվ) միտումների՝ ընդունում են այն, ինչը դեռևս չի հակասում փորձին (պարզունակ դյուրահավատություն կամ ինդուկցիա) և հուսալքվում են «հակասությունների» պատճառով, երբ ստանում են փորձառություններ, որոնք անհամատեղելի են արդեն իսկ առկա ու ձևավորված համոզմունքների հետ (ձեռք բերված թերահավատություն): Բեյնը եզրահանգում է, որ մարդը կարող է ունենալ համոզմունք միայն այն բանից հետո, երբ ոչ ռեֆլեքսիվ ակնկալիքը դիմանում է փորձությանը և ստուգմանը: Համոզմունքը *«բնածին դյուրահավատություն է, որը պահպանվում է փորձերի միջոցով»* (Bain 526): Համոզմունքի կրկնվող հաստատումները մեծացնում են մեր վստահությունը դրա նկատմամբ և կարող են մեզ պաշտպանել ապագա ստուգումների ու վերափորձաքննության ակնկալիքից, որին մենք անընդհատ հակված ենք լինում ձեռք բերված թերահավատության պատճառով: Ինչպես նկատում է Սյուզան Հեքը, Պիրսն օգտագործում է Բեյնի համոզմունքների վերաբերյալ ուսումնասիրությունները հետազոտության վերաբերյալ սեփական տեսությունը մշակելու համար: Կասկածը, ըստ Բեյնի, տհաճ և անցանկալի երևույթ է: Ցանկացած ոք նախընտրում է կայուն համոզմունք և սովորություն: Միևնույն ժամանակ Պիրսը կարծում է, որ հետազոտությունը սկսվում է կասկածից ու դրա կողմից խթանվելու արդյունքում: Հետազոտելու նպատակն է ապահովել անցումը

կասկածի վիճակից դեպի նոր համոզմունքի: Նշված գործընթացը պատկերվում է կրկնվող այսպիսի շրջափուլով՝

1. համոզմունք,
2. տրված համոզմունքին հակասող փորձառություն (կասկածի խթան),
3. կասկած,
4. նոր համոզմունք (haack 160):

Ըստ Պիրսի, քանի որ կասկածը որևէ արտաքին փորձի, պատճառի արդյունքում համոզմունքի ընդհատումն է, ապա հետազոտությունը (inquiry), որի սկսելու մոտիվացիան կասկածն է, պետք է իր հերթին մեկնարկի խնդրից ու խնդրահարույց իրավիճակից: Այլ կերպ ասած, պետք է ունենալ որևէ ավելի վաղ ձևավորված համոզմունք, որի ընդհատումը (դրա հետ անհամատեղելի փորձի ի հայտ գալը) վերջինիս կդնի կասկածի տակ: Այս կերպ մարդիկ հնարավորություն են ունենում հաղթահարելու չգիտակցվող ու ավանդույթի ուժով շարունակվող սովորույթները, որոնք հաճախ այնքան են մարդու վարքն ու միտքը մեխանիկական դարձնում, որ դրանք սկսում են չտարբերվել կենդանական ռեֆլեքսներից: Մևնույն ժամանակ, եթե ցանկացած հիմնավոր կասկած ի հայտ է գալիս որոշակի արտաքին հակասող փորձառության արդյունքում, իսկ համոզմունքների վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է խնդրի առկայությամբ, ապա ստացվում է, որ կասկածը ունի շատ կոնկրետ պատճառահետևանքային ծագում, և իրական կասկածը չի կարող տեղի ունենալ զուտ ցանկությամբ կամ կամավոր կերպով: **Պիրսն այս կերպ ֆալիբիլիզմը հստակ կերպով տարանջատում է ռադիկալ ու արմատական սկեպտիցիզմից, իսկ ճանաչողությունում հիմնավոր կասկածի ու սխալների մշտական առկայության հնարավորությունն արձանագրելով՝ պիրսյան ֆալիբիլիզմը խուսափում է նաև ֆունդամենտալիզմի և ինֆալիբիլիզմի սահմանափակումներից:** Պիրսը խստագույնս կարևորում է հետազոտության ու մտքի ընթացքի անընդհատությունը: Մի կողմից Պիրսը անհրաժեշտ է համարում ցանկացած քննության ու ուսումնասիրության մեկնարկին որոշակի բազային համոզմունքների ընդունումն ու առկայությունը, սակայն մյուս կողմից փիլիսոփան զրկում է համոզմունքներին անձեռնմխելիությունից և արձանագրում, որ տրված համոզմունքին հակասող ցանկացած արտաքին փորձի կամ ազդակի պարագայում ի հայտ եկող կասկածը պետք է ուղղորդի դեպի առկա համոզմունքների ստուգման ու փորձաքննման ճանապարհով նոր, ավելի հիմնավոր և պակաս սխալական համոզմունքների ձևավորմանը:

Պիրսյան ֆալիբիլիզմի առավել ընդհանուր սկզբունքները և դրանց ձևավորման նախադրյալները հնարավոր է տեսնել նաև փիլիսոփայի այլ տեսություններում և հայեցակարգերում: Մասնավորապես, պատճառականության հիմնախնդրին անդրադառնալիս Պիրսը քննարկում է իր ժամանակաշրջանում լայն տարածում ունեցող և ընդունված համոզմունքն այն մասին, որ *«տիեզերքում ցանկացած երևույթ հստակորեն պատճառավորված է բնության օրենքներով»* (Peirce, *The Doctrine of Necessity Examined* 321): Այս մասին իր հայացքները նա ամբողջացնում է տիխիզմի (հուն.՝ τύχη, *պատահականություն*) տեսության շրջանակում, ըստ որի՝ բացարձակ պատահականությունը և ինդետերմինիզմը նույնպես տիեզերքի օբյեկտիվ պատկերի մաս են. *«Փորձե՛ք ստուգել բնության ցանկացած օրենք, և դուք կտեսնեք, որ որքան ճշգրիտ լինեն ձեր դիտարկումները, այնքան ավելի հստակորեն դրանք ցույց կտան օրինաչափությունից անկանոն շեղումներ»* (Peirce, *The Doctrine of Necessity Examined* 329): Պիրսն, անշուշտ, չի հերքում բնության օրենքների գոյությունը և օրենքների միջոցով բնության մեջ ու տիեզերքում որոշակի կանոնակարգվածությունը, սակայն, ըստ Պիրսի՝ բնության օրենքներն այնպիսին են, որ դրանք անընդհատ ինչ-որ չափով խախտվում են: Տիխիզմից բխում է այն

գաղափարը, որ բնությունը օրենքից անսահման փոքր շեղումների ամբողջություն է, որոնք տեղի են ունենում անընդհատ և էլ ավելի տեսանելի կարող են լինել գիտության զարգացման ու շարունակական հետազոտության գործընթացում (Cosculluela 741-742): Եթե բնության ուսումնասիրությունը անհրաժեշտաբար ուղեկցվում է որոշակի պատահական և անկանխատեսելի երևույթների բացահայտմամբ, ապա այս պարագայում առկա համոզմունքներին և ճշմարտություններին հակասող փորձառությունը դառնում է անխուսափելի: Ինչ-որ իմաստով՝ Պիրսի ֆալիբիլիզմը՝ որպես իմացաբանական հայեցակարգ և փիլիսոփայի աշխարհայացքի ատրիբուտիվ բնութագիր, դրսևորվում է գոյաբանական հիմնախնդիրներում ինդետերմինիստական սկզբունքների ձևով: Բացարձակ (համընդհանուր) պատճառականությունը պետք է իր հերթին ենթադրի նաև բացարձակ որոշակիություն, քանի որ եթե յուրաքանչյուր երևույթ ունի իր պատճառը և բխում է որոշակի կոնկրետ ու հստակ հանգամանքներից, ապա այս գործընթացում չի մնում ոչինչ, որը հնարավոր չի լինի տվյալ հանգամանքներն իմանալու պարագայում կանխատեսել և իմանալ անսխալականորեն: Սակայն եթե որոշակիությունն ու անսխալականությունն անհասանելի են ֆալիբիլիզմի շրջանակում նկարագրված մի շարք պատճառներով, ապա համընդհանուր պատճականությունն իր հերթին դառնում է գործնականում անհնար:

Պիրսի ինդետերմինիստական և ֆալիբիլսիտական գաղափարները յուրատեսակ կերպով նախազգում էին այդ ժամանակաշրջանի գիտության ու մարդկային մտքի հիմնական միտումները: Այս գաղափարները մի կողմից անմիջականորեն հակադրվում են հարաբերականության ընդհանուր տեսության հեղինակ Այնշթայնի դետերմինիստական հայացքներին, իսկ մյուս կողմից յուրատեսակ կերպով մոտենում են քվանտային մեխանիկայի իմացաբանական ավանդույթներին և հատկապես Հայզենբերգի «անորոշությունների սկզբունքին»: **Հաշվի առնելով, որ Պիրսի ֆալիբիլիզմը դինամիկ ու կառուցողական հայեցակարգ է, որտեղ մտքի ընթացքն ու հետազոտությունն անընդհատ ուղղված է հիմնավոր կասկածի միջոցով առկա համոզմունքների ստուգմանը, վերանայմանը և բարելավվելուն, ապա ֆալիբիլիզմը վերածվում է գիտական առաջընթացը և գիտելիքների աճն ապահովող կարևոր պայմանի՝ պահպանելով հավասարակշռություն չափավոր կասկածի և որոշակիացված համոզմունքների, գիտելիքների ու, ի վերջո, ճշմարտությունների միջև:**

Ֆալիբիլիզմի զարգացումը Ուիլյամ Ջեյմսի և Ջոն Դյուիի հայացքներում

Պիրսից զատ՝ ֆալիբիլիստական հայացքներով են աչքի ընկել նաև 19-րդ դարի պրագմատիզմի այլ նշանավոր ներկայացուցիչներ Ուիլյամ Ջեյմսը և Ջոն Դյուիին: Ջեյմսին նախևառաջ հետաքրքրում էր ճշմարտության և իրականության փոխհարաբերման հիմնախնդիրը, որտեղ Ջեյմսը ճշմարտությունը համարում է իրականության հետ համաձայնեցվող երևույթ: Սակայն այս գործընթացն ուղեկցվում է փաստերի և մեր համոզմունքների համադրմամբ, որոնց արդյունքում մեզնից օբյեկտիվորեն անկախ փաստերն ու իրողությունները կարող են որոշակի փոփոխություններ պարտադրել մեր համոզմունքներին, և նույնիսկ նրանց, որոնք մենք կարող էինք համարել բացարձակ (James 91-97): Վերոնշյալից պարզ է դառնում այն, որ ինչպես Պիրսը, այնպես էլ Ջեյմսը շարունակում է իրականության մասին խոսել՝ հանդես գալով ռեալիզմի դիրքերից: Ակնհայտ է, որ մենք ճանաչում ու ընկալում ենք մեզնից օբյեկտիվորեն անկախ գնտվող իրականության երևույթներն ու առարկաները: **Խնդիրն այն է, որ մենք չենք կարող ունենալ համոզմունքներ ինչ-որ բանի վերաբերյալ՝ լիարժեքորեն բացառելով կասկածի տեսական հնարավորությունը:** Ըստ Ջեյմսի՝ *«Ճշմարիտը ընդամենը նպատակահարմարն է մեր մտածողության մեջ»:* Պրագմատիզմի այս մաքսիմը, սակայն, չի նշանակում, որ

նպատակահարմարությունը կարող է ձևավորել ճշմարտության օբյեկտիվ, անփոփոխ և անսխալական պատկերացումներ: *«Փորձը ... մեզ կարող է ստիպել ուղղել մեր ներկայիս բանաձևերը»* (Putnam 19): Հիլարի Փաթնամն արդարացիորեն նկատում է, որ Ուիլյամ Ջեյմսը, ինչպես Պիրսը, ճշմարտությունը և **«վերջնական կարծիքը»** հաճախ նույնացնում է, որն այն չէ, ինչը ներկայումս հաստատվել է, այլ այն, ինչը, համոզված ենք, որ կհաստատվի ապագայում, եթե մեր հետազոտությունն ու ուսումնասիրությունները շարունակվեն պատասխանատու կերպով և ֆալիբիլիզմի ոգուն համապատասխան (Putnam 21): Այս իմաստով **ճշմարիտը այն չէ, ինչն այս պահին արձանագրում ենք, քանի որ ապագայում դա կարող է հակասող փորձառության պատճառով վերանայման խնդրի առաջ կանգնել, այլ այն, ինչը ի հայտ կգա շարունակական հետազոտության ու փորձառության արդյունքում (ճշմարտությունը՝ որպես իդեալ, իսկ ճշմարիտը՝ որպես հետևանք)՝ հաշվի առնելով սխալվելու հնարավորությունը և մեր պատասխանատվությունը փորձը, համոզմունքներն ու իմացությունը սխալներից հնարավորինս մաքրելու և բարելավելու չընդհատվող գործընթացում:**

Ջոն Դյուին, հիմք ընդունելով պրագմատիզմի առավել ընդհանուր սկզբունքները, շարունակում է զարգացնել Պիրսի ֆալիբիլիզմի և հակաֆունդամենտալիզմի իմացաբանական դիրքորոշումները: Նա համակարծիք է Պիրսի հետ հիմնավոր կասկածի հարցում՝ անթույլատրելի համարելով առանց հիմնավոր պատճառների հաստատված համոզմունքներին կամ պատկերացումներին կասկածելը, քանի որ ցանկացած հիմնավոր կասկած կարող է ի հայտ գալ միայն որոշակի խնդրահարույց իրավիճակում, երբ, օրինակ, առկա է համոզմունքներին կամ փորձին հակասող նոր փորձառություն (Brown, *John Dewey's Logic of Science* 287): Դյուին դեմ է արտահայտվում ֆունդամենտալիզմին և ինֆալիբիլիզմին՝ պնդելով, որ գիտական հետազոտությունն ու ուսումնասիրությունն առհասարակ չեն առնչվում որևէ վերջնական և ավարտուն կետի: Եթե մենք ուսումնասիրելիս որոշ բաներ ընդունենք անփոփոխ և վերջնական, ապա այս իրավիճակը կարող է սահմանափակել և խանգարել տվյալ ուսումնասիրության շրջանակում ձևակերպված հարցադրումների համար պատասխանների հայտնաբերմանը: Միևնույն ժամանակ մենք պետք է մեզ համար որոշակիացնենք **«պայմանական ելակետեր»** մեր ուսումնասիրությունները ինչ-որ կետից սկսելու համար. թեև մենք անընդհատ պետք է մի շարք փաստեր և երևույթներ ընդունենք որպես հիմք, որպեսզի հնարավոր լինի առաջ գնալ ու ինչ-որ տեղ հասնել, այնուամենայնիվ, գոյություն չունի մի բան, որը կարող է կասկածից վեր լինել (Brown, *Science and experience* 23): Մատեու Բրաունը կարծում է, որ ֆունդամենտալիզմը Դյուիի համար ընդունելի չէր լինի նաև այն պատճառով, որ, ըստ Դյուիի, գիտելիքը և, հատկապես, զգայական ճանաչողության արդյունքում ձևավորվելիք գիտելիքը անմիջականորեն, տվյալ պահին ու անհապաղ կերպով տրվող երևույթ չէ: Սակայն կարելի է պնդել, որ պրագմատիզմի երեք ներկայացուցիչների համար **գիտելիքը, լայն իմաստով, երբեք էլ ներկայում գոյություն չունի առնվազն ավարտուն, ձևավորված և վերջավոր տեսքով, քանի որ իմացությունն ու հետազոտությունը ենթադրում են մշտական ու շարունակական գործընթաց, որտեղ խնդրահարույց իրավիճակներում ի հայտ եկող կասկածները մղում են մեզ վերանայելու ու բարելավելու առկա համոզմունքներն ու գիտելիքները:** Այս իմաստով տևականության ցանկացած կոնկրետ պահի մենք գործ ունենք **«ընթացիկ համոզմունքների ու գիտելիքների հետ»**, որոնք շարունակական ուսումնասիրման արդյունքում լավագույն դեպքում կարող են «խիստ հիպոթետիկ և ճշմարտանման» իմացաբանական վիճակից վերածվել «պակաս հիպոթետիկ և ճշմարտանման» վիճակի: Այս իմաստով Դյուիի պայմանական ելակետերը այն ընթացիկ համոզմունքներն ու գիտելիքներն են, որոնք

ուսումնասիրողի կողմից ընտրվում են տվյալ ուսումնասիրության համար որպես մեկնակետ: Բրաունը նկատում է, որ Դյուին, որպեսզի հակաֆունդամենտալիստական և հակասկեպտիկական հայացքների համադրման արդյունքում չհայտնվի նոր ծայրահեղությունում, ձևավորում է ֆալիբիլիստական հայեցակարգի իր տարբերակը՝ **հակասկեպտիկական ֆալիբիլիզմը**, որը միևնույն ժամանակ մերժում է առանց հիմնավոր պատճառների կասկածամտությունը և չի ընդունում ապրիորի ճշմարտությունների ու վերջնական հիմքերի գոյությունը, սակայն, այնուամենայնիվ, կարևորում է տվյալ պահին պայմանական ելակետային իմացաբանական հիմքերի՝ համոզմունքների ընդունման անհրաժեշտությունը որպես ուսումնասիրության ու մտքի ընթացքի ելակետ: Իսկ քանի որ առկա համոզմունքներն իր հերթին ձևավորվել են նախկինում եղած որոշակի փորձի (կրկնվող) արդյունքում, ապա մեր մտքի ընթացքն ու ուսումնասիրությունները պետք է հիմնվեն նախորդ փորձի վրա՝ քննադատական մոտեցում ցուցաբերելով հենց այդ փորձի նկատմամբ: Այս մասին Դյուին գրում է. *«Գիտության պատմությունը նաև ցույց է տալիս, որ երբ վարկածները համարվում էին վերջնականապես ճշմարիտ և, հետևաբար, անվիճելի, դրանք խոչընդոտում էին հետազոտությունը և ստիպում էին գիտությանը հավատարիմ մնալ այն հայեցակարգերին, որոնք հետագայում ոչ հիմնավոր ճանաչվեցին»* (Dewey, *The Later Works* 145): Պատասխանելով հարցին, թե արդյոք մենք կարող ենք որևէ բանում վստահ լինել (ունենալ որոշակի համոզմունքներ)՝ Դյուին նախևառաջ ակնկալում է հետևյալ հարցի պատասխանը՝ ***ի՞նչ է հնարավոր նկատի ունենալ «որոշակի» ասելով*:** Եթե «լինել որոշակի» նշանակում է լինել միանգամայն անկասկածելի և ապագայում վերանայման ոչ ենթակա, ապա որոշակիությունը ճանաչողությունում հնարավոր չէ: Իսկ եթե որոշակիություն ասելիս նկատի ունենանք սկզբունքորեն սխալական, սակայն կշռադատությունների տվյալ համակարգում հիմնավոր և կասկածներ չհարուցող սահմանափակ թվով գիտելիքները, ապա կարող ենք վստահ լինել, որ ունենք որոշակի և կոնկրետ իմացություն (պայմանական ճշմարտություններ), որի վրա կարող ենք հիմնվել հետագա ուսումնասիրությունները կատարելիս: Ինչպես Պիրսը, այնպես էլ Դյուին կարծում են՝ եթե մենք հետևողականորեն ուսումնասիրում ու քննադատության ենք ենթարկում որևէ համոզմունք կամ գիտելիք և տեսնում ենք, որ այն այլևս կասկածներ չի հարուցում կամ լուծում է նախնական խնդրահարույց իրավիճակը, որում ի հայտ է եկել, ապա որևէ պատճառ չի մնում այն չընդունելու համար: *«Չնայած մենք կարող ենք կասկածել որևէ կոնկրետ համոզմունքի, մենք, անշուշտ, չենք կարող կասկածի տակ առնել միանգամից մեր բոլոր համոզմունքները»* (Brown, *Science and experience* 40):

Ջոն Դյուին ֆալիբիլիզմի հիմնական սկզբունքների դիրքերից է հանդես գալիս նաև իր էթիկական և քաղաքական ուսմունքներում: Ըստ փիլիսոփայի՝ չկան ամրագրված, վերջնական արժեքներ և պետք էլ չէ փնտրել այդպիսիք: Լավագույն դեպքում, միակ արժեքը, որին կարելի է ձգտել, **«աճն»** է (Hildebrand Fall 2023): Էթիկան զբաղվում է կոնկրետ, խնդրահարույց իրավիճակների ուսումնասիրությունով, որոնց շրջանակում հնարավոր է կիրառել արդեն իսկ հայտնի տեսությունները՝ փորձի արդյունքում ի հայտ եկած վարկածների հիմնավորման համար: Սակայն, այնուամենայնիվ, նույնիսկ հաստատված վարկածները ու էթիկական վստահելի փորձը, որը մենք կարող ենք անվանել «գիտելիք», ի վերջո սխալական և վերանայելի են: Այս մասին Դյուին գրում է. *«Կյանքի նպատակը կատարելությունը չէ որպես վերջնանպատակ, այլ կատարելագործման, հասունացման, մաքրագործման հավերժական գործընթաց: Ազնվությունը, ջանասիրությունը, չափավորությունը, արդարությունը, ինչպես առողջությունը, հարստությունը և կրթությունը, այն որակները չեն, որոնք պետք է ունենալ որպես հաստատուն և անփոփոխ նպատակներ, որոնց պետք է ամեն գնով հասնել: Սրանք փորձի որակը փոխելու ուղենիշեր են:* ***Աճն ինքնին միակ բարոյական***

«վերջնանպատակն» է» (Dewey, *Reconstruction in Philosophy* 181): Դյուիի քաղաքական փիլիսոփայությունը, ինչպես մյուս ոլորտները, ենթադրում է, որ մարդիկ գոյություն ունեն սոցիալական միջավայրի հետ փոխազդեցության միջոցով և անընդհատ հարաբերվում են ի հայտ եկող խնդրահարույց իրավիճակների հետ: Դրանք հաղթահարելու համար մարդիկ պետք է լծվեն առկա խնդիրների լուծմանը, որոնց համար ևս, ինչպես այլ ոլորտներում, կիրառվում են փորձի վրա հիմնված ու կիրառական նշանակություն ունեցող տեսություններ, հայեցակարգեր և այլ գործիքներ: Սակայն այս գործիքները, որքան էլ արժեքավոր լինեն այս կամ այլ ոլորտներում, պիտանի լինեն բազմակի ու տարբեր դեպքերում կիրառման համար, բոլորը սխալական են և ենթակա վերակառուցման (Hildebrand Fall 2023):

Եզրակացություն

Ամփոփելով՝ նշենք, որ 19-րդ դարի փիլիսոփայական միտքը և այն կրող ու զարգացնող մտածողները հիմնարար նշանակություն են ունեցել մարդկային մտքի, փորձի, փիլիսոփայական ու գիտական մի շարք հիմնախնդիրների, ինչպես նաև դրանց նկատմամբ մեր պատկերացումների և մոտեցումների ձևավորման ու զարգացման գործում: Այս հարցում առանձնակի կարևոր դեր են ունեցել ամերիկյան պրագմատիզմի ներկայացուցիչներ Պիրսը, Ջեյմսը և Դյուին ու վերջիններիս վրա մեծ ազդեցություն թողած նախորդ մտածողները, որոնց կարևորած հիմնավոր և կառուցողական կասկածը իմացանության ու գիտության նախորդ ու դասականացված ավանդույթների նկատմամբ հիմք դարձավ փիլիսոփայության ու գիտության նախկին ավանդույթների վերահիմաստավորման և դրանց նկատմամբ քննադատականության ձևավորման համար: Արդյունքում, նշված մտածողների մոտ մարդկային սխալականությունն ու կասկածի մշտական առկայությունն արձանագրող ֆալիբիլիզմը բարձրացվեց հայեցակարգային մակարդակի՝ հաշվի առնելով վերջինիս իմացաբանական, մեթոդանական և աշխարհայացքային դերն ու նշանակությունը ճանաչողության ընդհանրապես ու, մասնավորապես, գիտական ճանաչողության ու հետազոտության գործընթացներում: Կատարված վերլուծությունը հնարավորություն է տալիս մի շարք կարևոր եզրակացությունների և հետևությունների.

1. 19-րդ դարի փիլիսոփայության և գիտության տարբեր ուղղություններ ու տեսություններ կարևոր նշանակություն են ունեցել ֆալիբիլիզմի հիմնական սկզբունքների ձևակերպման և զարգացման համար: Պրագմատիզմի փիլիսոփայությունը, կարևորելով բացարձակ որոշակի գիտելիքներից ու համոզմունքներից հրաժարումը հօգուտ սխալական, սակայն առավել հիմնավոր ու պրակտիկ խնդիրներ լուծող իմացության, ուղղակիորեն նպաստել է համոզմունքների, գիտելիքների ու դրանց հիմնավորման վերաբերյալ ֆալիբիլիզմի հայեցակարգային մոտեցումների զարգացմանը: Իսկ նույն ժամանակաշրջանում մարդու սխալականության, ճանաչողական կարողությունների ու ընկալման սահմանափակության, աղճատումների և այլ երևույթների վերաբերյալ էմպիրիկ հետազոտությունները էլ ավելի փաստարկված ու ծանրակշիռ են դարձրել ֆալիբիլիզմին իմացաբանական այլ հայեցակարգերի կողքին:

2. Անկախ հայեցակարգային և իմացաբանական հայացքների տարբերություններից՝ 19-րդ դարի ֆալիբիլիստների համար (տվյալ դեպքում Պիրսի, Ջեյմսի ու Դյուիի) ընդհանուր և միանշանակ է կասկածի (պրակտիկ կամ տեսական) մշտական առկայության հնարավորությունը մեր ճանաչողությունում, փորձառությունում և ուսումնասիրություններում: Հնարավոր չէ ունենալ երաշխիք, որ առկա համոզմունքներն ու ճշմարտությունները ապագայում չեն հակասի փորձի շրջանակում ի հայտ եկող նոր հանգամանքներին և երևույթներին: Հետևաբար,

լավագույնը, որ կարող է տեղի ունենալ, համոզմունքների ու գիտելիքների շարունակական, անդադար բարելավումն է:

3. Քննարկված մտածողների իմացաբանական համակարգերի վերլուծությունը արձանագրում է այն, որ ֆալիբիլիզմը տարբեր և հաճախ ծայրահեղական միտումներով հայեցակարգերի նկատմամբ միջանկյալ դերում է՝ այս պարագայում հակակշռելով ծայրահեղ սկեպտիցիզմին, ռադիկալ ռեյատիվիզմին, ֆունդամենտալիզմին և ինֆալիբիլիզմին:

4. Ե՛վ Պիրսի, և՛ Ջեյմսի և՛ թե Դյուիի ֆալիբիլիզմը դինամիկ ու կառուցողական բնույթ ունի՝ մտքի ու ճանաչողության ընթացքին հաղորդելով չընդհատվող և դեպի առաջընթացն ուղղված շարժում: Տևականության ցանկացած կոնկրետ պահի մեր ցանկացած համոզմունք և գիտելիք կարող են վերանայման ու փոփոխման անհրաժեշտության առաջ կանգնել: Մենք երբեք չունենք վերջնական, ավարտուն, անսխալական ու բացարձակ իմացություն: Ուստի ճանաչողությունը հավերժական ընթացք է, որտեղ մեր խնդիրն է, խիստ հիպոթետիկ ու անորոշ իմացությունը բարելավելով, ձգտել պակաս հիպոթետիկ և ավելի որոշակի իմացության: Ֆալիբիլիզմի շրջանակում ճշմարտությունը սոսկ իդեալ է, որը որպես ուղենիշ ապահովում է մեր մտքերի ու ճանաչողության անշեղ ընթացքը, իսկ ճշմարիտը՝ ձեռք բերվող փորձի ու չընդհատվող ուսումնասիրությունների հետևանք, որը կարող է համարվել պայմանականորեն ընդունելի, սակայն ոչ երբեք անսխալական և վերջնական:

5. Կասկածի և համոզմունքի փոխհարաբերության պիրսյան մեկնաբանությունն արմատավորում է ֆալիբիլիզմի մեթոդաբանական նշանակությունն ու ներուժը իմացաբանական-գիտաբանական խնդրակարգի համար: Ֆալիբիլիզմի շրջանակում տրված մեկնաբանությունը թույլ է տալիս չկորցնել առկա համոզմունքներն ու գիտելիքները և միևնույն ժամանակ բարելավել դրանք հնարավոր խնդրահարույց իրավիճակների դեպքում:

6. Արդեն իսկ 19-րդ դարում տեսանելի էին ֆալիբիլիստական հայեցակարգի հիմնական սկզբունքների կիրառելիությունը զուտ իմացաբանական-գիտաբանական խնդրակարգից դուրս՝ հասարակական-քաղաքական ոլորտներում և հիմնախնդիրների առնչությամբ: Ֆալիբիլիզմը առաջինը իմացաբանական խնդրակարգում կիրառող մտածողների կողմից այն գիտելիքների ավելի լայն ոլորտներում կիրառելու փորձերը վկայում են ֆալիբիլիզմի համընդհանուր և մետահայեցակարգային նշանակության մասին:

7. Կատարված քննության արդյունքում ի հայտ են գալիս նաև մի շարք անորոշություններ և խնդիրներ, որոնք հետագայում և այսօր էլ համարվում են բաց հիմնախնդիրներ և կարիք ունեն հետագա քննության: Դրանցից հատկանշական է գիտելիքների հիմնավորման հիմնախնդիրը: Եթե գիտելիքը գոյություն չունի ներկայում և գիտելիքների ձևավորումն ու ստացումն անընդհատ գործընթաց է, հետևաբար, հարց է առաջանում, թե որն է գիտելիքների հիմնավորման բավարար մակարդակը, որը թույլ կտա որևէ համոզմունք համարել գիտելիք: Արդյոք հիմնավորման որոշակի, հստակ և ընդունելի որևէ մակարդակ հնարավո՞ր է բխեցնել ֆալիբիլիստական հայեցակարգից, թե՞ այն կարող է ունենալ բացառապես կոնվենցիոնալ բնույթ: Մեկ այլ հիմնախնդրի ենք բախվում առկա համոզմունքների ու գիտելիքների նկատմամբ քննադատական մոտեցում ցուցաբերելիս: Ֆալիբիլիզմի շրջանակում դեռևս պետք է հասկանալ, թե ինչքան է պետք քննել հիմնավոր կասկած առաջացնող որևէ համոզմունք, և որն է այն սահմանը, որից սկսած արդեն կարող ենք պնդել, որ ունենք հիմնապես նոր, բարեփոխված համոզմունք: Այս և այլ հիմնախնդիրների հետագա քննությունը հնարավորություն կտա հաղթահարելու ֆալիբիլիստական հայեցակարգի նկարագրված և այլ բարդությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bain, Alexander. *The Emotions and the Will*, 3rd edition, Longman's Green, New York, p. 697, 1875.
2. Brown, Matthew, “John Dewey’s Logic of Science”. *HOPOS: The Journal of the International Society for the History of Philosophy of Science*, vol. 2, no. 2, pp. 258–306, 2012.
3. ---. *Science and experience: a Deweyan Pragmatist Philosophy of Science,* UC San Diego, p. 235, 2009.
4. Cooke, Elizabeth, “Peirce, Fallibilism, and the Science of Mathematics”. *Philosophia Mathematica*, Volume 11, Issue 2, pp. 158–175, 2003.
5. Cosculluela, Victor, “Peirce on Tychism and Determinism”. *Transactions of the Charles S. Peirce Society*, 28(4), pp. 741–755, 1992.
6. Dewey, John. *Reconstruction in Philosophy*, 1920, The Middle Works, 1899–1924, Volume 12. The Collected Works of John Dewey, 1882-1953, edited by Jo Ann Boydston, Carbondale: Southern Illinois UP, 1969-1991.
7. ---. *The Later Works*, 1925-1953, Volume 12. The Collected Works of John Dewey, 1882-1953, edited by Jo Ann Boydston, Carbondale: Southern Illinois UP, p. 796, 1969-1991.
8. Haack, Susan, “Descartes, Peirce and the Cognitive Community”. *The Monist*, vol. 65, no. 2, pp. 156–181, 1982.
9. Hildebrand, David, "John Dewey", *The Stanford Encyclopedia of Philosophy*, Fall 2023 Edition, Edward N. Zalta & Uri Nodelman, https://plato.stanford.edu/entries/dewey/. Accessed: 15 Feb 2024.
10. Peirce, Charles Sanders. *Philosophical Writings of Peirce,* Dover Publications, New York, p. 356, 1955.
11. ---, “The Doctrine of Necessity Examined”, *The Monist*, 2(3), pp. 321–337, 1892.
12. Putnam, Hilary, “The Permanence of William James”. *Bulletin of the American Academy of Arts and Sciences*, 46(3), pp. 17–31, 1992.
13. William James. *Pragmatism*, ed. Bruce Kuklick. Indianapolis: Hackett, p. 152, 1981.

THE DEVELOPMENT OF FALLIBILISM IN THE PHILOSOPHY OF PRAGMATISM IN 19TH CENTURY

DAVIT AKELYAN

Yerevan State University, Faculty of Philosophy and Psychology,
Chair of History, Theory and Logic of Philosophy,
Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The primary goal of the article is to reveal the development of fallibilism and its main principles within the epistemological and scientific frameworks of various 19th-century philosophers, with a particular emphasis on the pragmatist movement.

To achieve its goal, the article seeks to address several key objectives: to scrutinize the epistemological, scientific, and other philosophical perspectives of numerous 19th-century thinkers who played a pivotal role in shaping and advancing fallibilism; to investigate the similarities and distinctions among the pragmatist philosophers who significantly contributed to the development of fallibilism; and to identify the main trajectories in the emergence and expression of fallibilism during this period.

Many primary sources and articles were used in the research, employing a variety of methodological approaches including analysis, synthesis, induction, deduction, analogy, and historical comparison.

The main conclusion of the research is that several 19th-century philosophers and scientists, notably Charles Peirce, William James, and John Dewey, played a critical role in articulating and advancing the core tenets of fallibilism. Their work highlighted the inevitability of perpetual doubt and error in the process of knowledge acquisition, underscoring the significant epistemological and methodological roles of fallibilism. This research demonstrates that the foundational principles of fallibilism were not only recognized in the 19th century but were also applied across various domains of knowledge, addressing social and political issues. Such insights are crucial for future investigations into the broader applicability of fallibilism beyond strictly epistemological contexts.

Keywords: *fallibilism, infallibilism, fundamentalism, skepticism, pragmatism, doubt, belief, knowledge.*

РАЗВИТИЕ ФАЛЛИБИЛИЗМА В ФИЛОСОФИИ ПРАГМАТИЗМА XIX ВЕКА

ДАВИД АКЕЛЯН
аспирант кафедры истории, теории и логики
философии факультета философии и психологии
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

Основная цель статьи — проследить развитие фаллибилизма и его основных принципов в гносеологических и научных рамках взглядов различных философов XIX века, сделав особый акцент на прагматическом движении.

Для достижения заявленной цели в статье ставится несколько ключевых задач: подробно изучить гносеологические, научные и другие философские взгляды многочисленных мыслителей XIX века, сыгравших ключевую роль в формировании и распространении фаллибилизма; исследовать сходства и различия взглядов философов-прагматиков, внесших значительный вклад в развитие фаллибилизма и определить основные траектории возникновения и выражения фаллибилизма в этот период.

В исследовании было использовано множество первоисточников и статей с применением различных методологических подходов, включая анализ, синтез, индукцию, дедукцию, аналогию и историческое сравнение.

Главный вывод исследования заключается в том, что несколько философов и ученых XIX века, в частности, Чарльз Пирс, Уильям Джеймс и Джон Дьюи, сыграли решающую роль в формулировании и продвижении основных принципов фаллибилизма. Их работа подчеркнула неизбежность постоянных сомнений и ошибок в процессе приобретения знаний, подчеркнув значительную эпистемологическую и методологическую роль фаллибилизма. Данное исследование показывает, что основополагающие принципы фаллибилизма были не только признаны в XIX веке, но также применялись в различных областях знаний, при решении социальных и политических проблем. Такое понимание имеет решающее значение для будущих исследований более широкого применениях фаллибилизма за пределами строго эпистемологического контекста.

Ключевые слова: *фаллибилизм, инфаллибилизм, фундаментализм, скептицизм, прагматизм, сомнение, убеждение, знание.*